



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵԾ ՄԱՍՐԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Մեծ Մասրիկ. Փ.-5. Շենք-12.. հեռ. 6-12-83. քջջ. 093-385-093

№ ---

<<----->> <<----->> 2011թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ
 Գյուղապետարանի կողմից կատարված 2011թ աշխատանքների մասին

Հաշվետվություն

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքներով, համայնքի ավագանու որոշումներով՝ հաշվետու տարվա ընթացքում զգալի աշխատանք է կատարվել համայնքի սոցիալ- տնտեսական խնդիրների իրականացման, 2011թ բյուջեի կատարման, ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման, քառամյա ծրագրի կանխատեսումների իրականացման, համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման, աշխատողների և բնակչության հանգստի, հոգևոր և մշակութային միջոցառումների իրականացման, երեխաների նախադպրոցական դաստիարակչական կազմակերպման և ֆինանսավորման ուղղությամբ: Ավագանու վեց նիստերում և համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում՝ համապատասխանաբար ընդունվել են՝ 28 և 21 որոշումներ:

Ընդունված որոշումների և բյուջետային գործընթացների թափանցիկության, հրապարակայնության ապահովման, համայնքային քնարկումների, որոշումների ընդունման գործընթացներին համայնքի բնակչության մասնակցության, քաղաքացիների ընդունելության ժամանակ նրանց կողմից արված դիտողությունների և առաջարկությունների քնարկումների, համայնքի անդամների առաջ համայնքի ղեկավարի հաշվետվությունների քնարկումների կիրառման ավանդույթները մեծապես նպաստել են համայնքի առջև դրված մեծածավալ խնդիրների իրականացմանը:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ համայնքի բյուջեով նախատեսված պլանային առաջադրանքները կատարվել են 94%:

Ընդվորում՝ հողի վարձավճարինը՝ 94%, հողի հարկինը՝ 94%, գույքահարկինը՝ 94%:

Համայնքի միջոցներով և միջազգային հումանիտար կազմակերպությունների օգնությամբ ընթացիկ տարում համայնքում իրականացվել են կենսական նշանակություն ունեցող մի շարք հիմնախնդիրներ.

___<<Վորլդ Վիժն>> կազմակերպության ֆինանսավորմամբ, համայնքի ներդրումների միջոցով կառուցվել և շահագործման է հանձնվել՝ Շատջրեք- Մեծ Մասրիկ /57894 ԱՄՆ դոլար նախագծային

արժեքով/ 10կմ. խմելու ջրատարը: Նոր ջրատարի շահագործմամբ համայնքը լրացուցիչ ստացավ 30լ/վ խմելու որակյալ ջուր, որով լուծվեց համայնքի բնակչության խմելու ջրի հիմախնդիրը:

Կառուցվեց և շահագործման հանձնվեց <<Մասրիկ>> գետից սնվող 3-րդ կարգի 1,2կմ երկարությամբ /70.000ԱՄՆ դոլար նախագծային արժեքով/ ջրատարը: Վերը նշված կառույցների միջոցով <<Պլան>> կոչվող թաղամասի շուրջ 100 ընտանիքներ ապահովվեցին խմելու և ոռոգման ջրով:

— Համայնքի միջոցներով կառուցվեց 3կմ. խմելու ջրագծի ներքին ցանց.

— Վերանորոգվեց համայնքի տարրական դպրոցի մասնաշենքի մի հատվածը և հանձնվեց նորաստեղծ նախակրթարանին.

— Գյուղապետարանի միջոցներով վերանորոգվել են համայնքի ենթակայությանը պատկանող երկու մանկապարտեզների շենքերը, սանհանգույցները, և ապահովվել են խմելու ջրով.

— Համայնքի երկու դպրոցները ևս ապահովվել են խմելու ջրով.

— Մարզպետարանի ֆինանսավորմամբ նորացվել են տարրական դպրոցի դռներն ու լուսամուտները.

— Լուծվել է համայնքի 5-րդ փողոցի գիշերային լուսավորության հարցը: 2012թ. գիշերային լուսավորություն կանցկացվի նաև 4-րդ փողոցի հատվածում:

— 2012թ. ընթացքում տեղական բյուջեի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել են գյուղամիջյան ճանապարհներն ու ջրահեռացման առուները.

— <<Ասիական>> ծրագրով ասֆալտապատվել են գյուղը երիզող երկու ճանապարհները.

— <<Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրով վերանորոգվել է Ակունք- Մեծ Մասրիկ ջրատարը.

Զգալի աշխատանք է կատարվել առևտրի ոլորտի օբյեկտների ցանցի ընդարձակման ուղղությամբ: Այժմ համայնքում գործում են առևտրի սպասարկման երկու համալիր կենտրոններ՝ երկու ռեստորան, հյուրանոց, 21 առևտրի այլ օբյեկտներ, 2 հանդիսությունների սրահ, գազալցակայան, 2 հացաթխման և 1 մակարոնի արտադրամասեր, ավտովազման կետ և այլ օբյեկտներ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը՝ մի շարք ձեռներեցներին իրենց բիզնեսը ծավալելու համար հատկացվել է տարածք:

Լուրջ աշխատանք է կատարվել ազգաբնակչության բուժսպասարկման բարելավման ուղղությամբ՝ վերանորոգվել և նորագույն բուժսարքավորումներով է համլրվել բուժտեղամասը:

Առաձնակի ուշադրություն է դարձվել համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման ուղղությամբ:

Ավելի ընդգրկուն են գյուղատնտեսության բնագավառի խնդիրները: Հանրապետության նախագահի կողմից գյուղատնտեսությունը գերակա ճյուղ հայտարարելուն պես համայնքապետարանը անում է ամեն ինչ գյուղի հնարավորություններն առավելագույնս օգտագործելու, գիտության և նորագույն տեխնիկայի կիրառմամբ հողի ինտեսիվության միջոցով առավելագույն բերք ստանալու համար:

Էական աշխատանք է կատարվում սերմնաբուծության զարգացման ուղղությամբ:

2011թ ստացվել է Ռուսաստանից բերված 28 տոննա բարձրակարգ աշնանացան ցորենի և 22 տոննա գարնանացան գարու սերմացու և բաժանվել է համայնքի գյուղացիական տնտեսություններին:

Ցանված սերմացուից ստացվել է զգալիորեն բարձր արդյունք: Այսօրվա դրությամբ համայնքում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմում են 1505հա,

միջին բերքատվությունը համապատասխանաբար՝ 25 և 21ց. կարտոֆիլի պլանտանցիաները՝ 490հա, միջին բերքատվությունը՝ 30տ, բազմամյա խոտաբույսերին՝ 261հա, միջին բերքատվությունը՝ 24ց:

Համայնքում լուծված է նաև ջրի խնդիրը /համայնքում գործում է 12 խորքային հորեր, Ակունք - Մեծ Մասրիկ ջրանցքը, առաջիկա 2 տարիներին ջրովի տարածքները կհասվեն 1000հա, որը մեզ հնարավորություն կտա համայնքը դարձնելու հացահատիկի իսկական շտեմարան: Մեր

բնակլիմայական պայմանները թույլ են տալիս մշակելու նաև ծխախոտ: 2012թ-ին կսկսվի ծխախոտի պլանտացիաների հիմնադրման գործընթացը:

Գարնանը երկրագործներին օգնելու նպատակով ձեռք է բերվել և տնտեսություններին է բաժանվել 120տ. ազոտական պարարտանյութ: Այժմվանից սկսվել է գարնանացանի նախապատրաստական աշխատանքները շուտով կներկրվի 100տ. ազոտական պարարտանյութի նոր խմբաքանակ գյուղացիական տնտեսություններին բաժանելու համար:

Լուրջ աշխատանքներ են իրականացվել անասնապահության հետագա զարգացման, տոհմական գործի կազմակերպման, անասունների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Վերջին 2 տարվա ընթացքում անասնազվաքանակը համայնքում ավելացել է 600 գլխով:

Էական աշխատանք է կատարվել համայնքում մշակութային կյանքը աշխուժացնելու, երիտասարդության ֆիզիկական գործը պատշաճին կազմակերպելու համար: Մեզանում պրակտիկա է դարձել տրադիցիոն տոների և մշակութային միջոցառումների անցկացումը:

Առանձնահատուկ ուժադրություն են դարձվում համայնքում սոցիալապես անապահով պայմաներում գտնվող ընտանիքների նկատմամբ: Հաշվետու տարվա ընթացքում համայնքի բնակիչներին, համայնքի բյուջեից տրամադրվել է 1.200.000 դրամի օգնություն:

Համայնքի 2 դպրոցների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարները մուծելու նպատակով բյուջեից տրամադրվել է 148.000 դրամի օգնություն:

Հայրենական մեծ պատերազմի երկու վետերանների և արցախյան ազատամարտի չորս զոհվածների ընտանիքներին տրամադրվել է 120.000 դրամի օգնություն:

Ամանորի և սուրբ ծննդի տոների կապակցությամբ մանկապարտեզի սաների համար տրամադրվել են նվերներ:

Չնայաց մեր ձեռքբերումներին համայնքում կան չլուծված բազում խնդիրներ թերություններ, հավաստիացնում ենք, որ կարվի ամեն ինչ տեղ գտած թերությունները վերացնելու համայնքը հանրապետության առաջատար համայնք դարձնելու համար:

Մեծ Մասրիկ համայնքի ղեկավար՝

Մ. Խլոյան

